



ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԸՆԿՐԱՎՈՐ
ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ

Հ/Հ	Միջոցառումների անվանումը	Կատարող	Կատարման ժամկետը
1	2	3	4
1. Կ ա ն խ ա ր գ ե լ ի չ մ ի ջ ո ճ ա ճ ու մ ն ե ր			
1.	Ուսումնասիրել և գնահատել գետերի հունների, հակահեղեղային կառույցների և սելավատարների վիճակը և արդյունքները ներկայացնել Կոտայքի մարզային փրկարարական վարչություն:	Համայնքների ղեկավարներ	Մինչև 20.03.2013թ.
2.	Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ գետերի հունների, հակահեղեղային կառույցների և սելավատարների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցները ամրացնելու համար:		Մինչև 20.03.2013թ.
3.	Մաքրել համայնքի տարածքով հոսող գետերի հունները, հակահեղեղային կառույցները և սելավատարները: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները:		Մշտական
4.	Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում դաշտային աշխատանքները կարգավորելու համար:		Մարզի հիդրոոդերևութաբանական ծառայության պետ
5.	Տարվա ընթացքում ուժեղացնել հսկողությունը գետերի ջրի, ջրամբարների մակարդակի բարձրացման, օդի ջերմաստիճանի և ճնշման փոփոխությունների նկատմամբ: Կտրուկ փոփոխությունների ժամանակ անմիջապես ստացված տվյալները հայտնել Կոտայքի մարզային փրկարարական վարչություն:	Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալտնտեսական զարգացման վարչության պետ , քաղաքաշինության վարչության պետ	Մինչև 20.03.2013թ.
6.	Նախապատրաստել համապատասխան քանակի տրանսպորտային միջոցներ, ինչպես նաև վառելիքաքսայուղային նյութերի պաշար՝ հարկ եղած դեպքում աղետի շրջանից բնակչության տարահանման և վերականգնողական աշխատանքներ կատարելու համար:	Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ	Մինչև 20.03.2013թ.
7.	Նախապատրաստել միջոցներ՝ հարկ եղած դեպքում տուժածներին առաջին բուժօգնություն և բժշկական օգնություն ցույց տալու, անհրաժեշտության դեպքում ստացիոնար բուժում կատարելու համար:	Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, համայնքների ղեկավարներ	Մինչև 15.03.2013թ.
8.	Պատրաստ վիճակի բերել համայնքային կազմավորումները և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով:	Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, համայնքների ղեկավարներ	Մինչև 15.03.2013թ.
2. Հ ի մ ն ա կ ա ն մ ի ջ ո ճ ա ճ ու մ ն ե ր			
9.	Իրագրել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների	Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, համայնքների	Մշտապես

1	2	3	4
	մասին:	ղեկավարներ	
10.	Հնարավոր վտանգավոր արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար:	Համայնքների ղեկավարներ	Անհրաժեշտության դեպքում
11.	Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը:	Տարահանման հանձնաժողովի նախագահ, համայնքների ղեկավարներ	Անհրաժեշտության դեպքում
12.	Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ:	Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, համայնքների ղեկավարներ	Ըստ անհրաժեշտության
13.	Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ), ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների:	Համայնքների ղեկավարներ	Անհրաժեշտության դեպքում
14.	Ապահովել կապը աղետի շրջանում գտնվող համայնքների, հիմնարկ-ձեռնարկությունների և մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի միջև:	«ԱրմենՏել» ՓԲԸ Կոտայքի տարածքային կենտրոն	
15.	Գիշերային ժամերին փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները շարունակելու համար ապահովել համապատասխան լուսավորվածություն:	«ՀԷՑ» ՓԲԸ «Գեղամա» մասնաճյուղի տնօրեն	